26.02.24 - 26.02.24
13:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ չինարենի և չինական մշակույթի կենտրոն

Ս.թ. փետրվարի 26-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ չինարենի և չինական մշակույթի կենտրոնում տեղի կունենա բաց դաս՝ նվիրված չինական Նոր տարվան և Լապտերների տոնին։

Միջոցառման նպատակն է չինարեն ուսումնասիրող ուսանողներին և Չինաստանով ու չինական մշակույթով հետաքրքրվող անձանց ծանոթացնել չինական ավանդական տոների՝ Ամանորի և Լապտերների տոնի առանձնահատկություններին։

Միջոցառման ժամանակ Նոր տարվա և Լապտերների տոնի վերաբերյալ դասախոսություն կկարդա դասախոս Կաո Հանը, այնուհետև կանցկացվի զրույց-քննարկում, որի շրջանակում զուգահեռներ կտարվեն չինական և հայկական ավանդական տոների միջև։ Կանցկացվի նաև խաղ-մրցույթ ավանդական հանելուկների վերաբերյալ։ Ցերեկույթը կեզրափակվի երաժշտական համարով։

Միջոցառմանը ներկա կլինեն ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Տիգրան Եփրեմյանը, Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Սյուզաննա Նավասարդյանը, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտի ղեկավար կազմը և դասախոսները, ՀՀ-ում ՉԺՀ դեսպանության ներկայացուցիչները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am